ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

Ք. Երևան 16.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/73

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, քննելով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 26.06.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/73 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 26.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ն, մասնակցելով «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 2018 թվականի մայիսի 17-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին

(այսուհետ՝ Ընթացակարգ), ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Այնուհետև Պատվիրատուն ներկայացրել է գնման պայմանագրի նախագիծ, որի 4-րդ կետում կատարվել են գործող օրենսդրությանը հակասող որոշ փոփոխություններ:

Ընկերությունը խախտումների մասին գրավոր տեղեկացրել է Պատվիրատուին՝ խնդրելով կատարել համապատասխան ուղղումներ: Պատվիրատուն, որոշ փոփոխություններ կատարելով, կրկին ուղարկել է գնման պայմանագրի նախագիծը՝ սահմանելով միավորի գին այն դեպքում, երբ ի սկզբանե հրավերով միավորի գին սահմանված չի եղել:

Ընկերությունը գտնում է, որ կատարված փոփոխությունները հակասում են գործող օրենսդրությանը և ենթակա են փոփոխման հետևյալ պատճառաբանությամբ.

Պատվիրատուի կողմից պայմանագրի նախագծի 4-րդ կետի 4.1 ենթակետով սահմանվել է ծառայության գին մեկ անձի համար՝ բաժանելով չափաբաժնի համար առաջարկված ընդհանուր գինը ապահովագրման ենթակա անձանց առավելագույն քանակի վրա, որի արդյունքում ստացվում է, որ Պատվիրատուի կողմից 1300 հոգուց պակաս անձ ապահովագրության ներկայացնելու դեպքում՝ պայմանագրի գինը կարող է պակաս լինել Կատարողի կողմից առաջարկված ընդհանուր գնից:

Հրավերով ներկայացված հավելված 6-ի 4-րդ կետի 4.1 ենթակետի բովանդակությունը հետևյալն է՝ «4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է _____ (____տառերով _____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագրի գինը կարող է լինել գործոնային, երբ պայմանագրի գինը փոփոխվում է պայմանագրով նախատեսված պայմանների (գործոնների) փոփոխության ազդեցությամբ: Հակառակ դեպքում պայմանագրի գինը կայուն է, և կողմերը պարտավոր են պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարել պայմանագրի գնի շրջանակում:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 7-րդ կետի 8-րդ ենթակետի՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Համաձայն Պատվիրատուի կողմից հայտարարված գնանշման հարցման Հավելված 6-ի 4-րդ կետի 4.1 ենթակետի վերջին պարբերության՝

«Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:

Առաջնորդվելով վերոնշյալ կետերով, ինչպես նաև Հրավերի առաջին մասի 5-րդ կետի 5.3 ենթակետով, ըստ որի եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով, Ընկերությունը ներկայացրել է մեկ թվով ընդհանուր գին, որը պետք է ամրագրվի գնման պայմանագրում՝ անկախ պայմանագրի ներքո ապահովագրվող անձանց քանակից: Հետևաբար մեկ անձի գծով գինը կորոշվի միայն պայմանագրի ներքո փաստացի ապահովագրվող անձանց քանակը ներկայացնելիս՝ բաժանելով ընդհանուր գինը փաստացի ապահովագրվող անձանց քանակի վրա:

Տվյալ դեպքում գնանշման հարցման ընթացակարգի հրավերի անբաժանելի մասը կազմող հավելված 6-ը և Պատվիրատուի կողմից 2018 թվականի հունիսի 14-ին ներկայացված գնման պայմանագրի նախագիծը չեն համապատասխանում միմյանց, մասնավորապես՝ հրավերով ներկայացված հավելված 6-ի 4-րդ կետի 4.1 ենթակետի բովանդակությունը հետևյալն է՝

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է _____ (____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:

Իսկ Պատվիրատուի կողմից 2018 թվականի հունիսի 14-ին ուղարկված գնման պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետի բովանդակությունը հետևյալն է՝

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը մեկ անձի համար կազմում է 44,584.6 ՀՀ դրամ առավելագույնը 1300 աշխատակցի համար պայմանագրի գինը կկազմի 57,960,000 ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները»:

Ինչպես պարզ երևում է, հրավերով նախատեսված չի եղել մեկ անձի գծով գնի ամրագրում գնման պայմանագրում, ինչպես նաև հանվել է վերջին պարբերությունը, որտեղ նշվում է, որ ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը: Մինչդեռ ներկայացված գնման պայմանագրի նախագիծը միտում ունի գինը արհեստականորեն նվազեցնելու:

Ինչ վերաբերվում է Պատվիրուտուի կողմից 21.06.2018թ. ուղարկված պատասխանում Կարգի 56-րդ կետի 1-ին ենթակետին հղում կատարելուն՝ ապա Ընկերությունը նշել է, որ տվյալ դեպքում ծառայությունների ծավալի փոփոխման մասին խոսք լինել չի կարող, այն անփոփոխ է: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում Պատվիրատուն նպատակ ունի ապահովագրել ավելի քիչ թվով անձանց, քան ներկայացվել է ի սկզբանե՝ վճարելով ավելի ցածր ապահովագրավճար:

Համաձայն հրավերի առաջին մասին 9-րդ կետի 9.1 ենթակետի՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Համաձայն Կարգի 7-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության 2-րդ նախադասության՝ մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ:

Պատվիրատուի կողմից կատարված վերը թվարկված խախտումների հետևանքով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն հնարավորություն չունի հաշվարկել և ներկայացնել

պայմանագրի ապահովում, քանի որ Պատվիրատուի կողմից ներկայացված գնման պայմանագրից պարզ չէ պայմանագրի ընդհանուր գինը:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից բխում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի եւ գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ բողոքարկման խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել պարտավորեցնել «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին վերանայել 14.06.2018թ. իր կողմից ներկայացված գնման պայմանագրի նախագծի 4-րդ կետը և այն ներկայացնել ՀՀ օրենսդրությանը համապատասխանող խմբագրությամբ, մասնավորապես գնման պայմանագրի նախագծում ամրագրելով գնային առաջարկելով կատարողի կողմից ներկայացված պայմանագրի ընդհանուր գինը մեկ թվով:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը 29.06.2018թ. թիվ 01/13.1/1200-18 գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հրավերով սահմանվել է առավելագույնը 1300 շահառուների առողջության ապահովագրման ծառայությունների մատուցման պայմաններ, հաշվի առնելով առողջության ապահովագրման ծառայության կամավոր լինելը: «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն մասնակցելով վերը նշված գնման ընթացակարգին, հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանված առավելագույնը 1300 մարդ շահառուների առողջության ապահովագրման ծառայությունների մատուցման համար հրավերի 1-ին մասի 5.3 կետի պահանջներին համապատասխան ներկայացրել է գնային առաջարկ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ առավելագույնը 1300 շահառուի հաշվարկով, որը կազմում է 57 960 000 ՀՀ դրամ, հետևաբար մեկ շահառուի համար առողջության ապահովագրման ծառայությունների մատուցման գինը կազմում է 44 584.6 ՀՀ դրամ ինչն ամրագրված է պայմանագրի նախագծում:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝ 1. պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների նվազեցումը կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների,

ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը:

Պայմանագրի գնի անփոփոխ մնալու պարագայում ծառայության ծավալի նվազեցումը կհանգեցնի Կարգի կետի 56-րդ կետի 1-ին ենթակետի խախտմանը:

Ինչ վերաբերվում է այն հարցադրմանը, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն հնարավորություն չունի հաշվարկելու և ներկայացնելու պայմանագրի ապահովման չափը, ապա «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով հրավերի 1-ին մասի 9.1 կետի համաձայն՝ Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը (հրավերի 1-ին մասի 9.2 կետի):

Համաձայն Կարգի 31-րդ կետի 11-րդ ենթակետի՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/73 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/73 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների

համար առողջության ապահովագրման ծառայության ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել է ձեռքբերել մինչև 1300 մարդու համար առողջության ապահովագրման ծառայություն:

3. «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացվել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 57 960 000 ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի 26.06.2018թ. բողոքը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 29.06.2018թ. թիվ 01/13.1/1200-18 գրությունը և կից փաստաթղթերը, գտնում եմ, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի 26.06.2018թ. բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգի արդյունքում կնքվում է պայմանագիր:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է, որ հրավերը պետք է պարունակի պայմանագրի նախագիծը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-4-րդ մասերի համաձայն՝

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

1. Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

2. Պայմանագրի գինը կարող է լինել գործոնային, երբ պայմանագրի գինը փոփոխվում է պայմանագրով նախատեսված պայմանների (գործոնների) փոփոխության ազդեցությամբ: Հակառակ դեպքում պայմանագրի գինը կայուն է, և կողմերը պարտավոր են պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարել պայմանագրի գնի շրջանակում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում, ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում: Եթե հրավերում և պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:

Կարգի 54-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը գործոնային է, հրավերով նախատեսվում են՝

1) բոլոր այն պայմանները (այսուհետ՝ արտաքին գործոններ), որոնց փոփոխությամբ պայմանագրի գինը կարող է փոփոխվել.

2) արտաքին գործոնների փոփոխությամբ պայմանագրի գնի փոփոխման կարգը:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար առողջության ապահովագրման ծառայության ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել է ձեռքբերել մինչև 1300 մարդու համար առողջության ապահովագրման ծառայություն:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, որը ***հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է մեկ թվով արտահայտված գնային առաջարկ՝ 57 960 000 ՀՀ դրամ ընդհանուր գնով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընկերությանը 14.06.2018թ. ուղարկվել է պայմանագրի նախագիծը և պայմանագրի կատարման ապահովումը: Պայմանագրի նախագծի 4-րդ կետի 4.1 ենթակետը ձևակերպվել է հետևյալ կերպ. «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը մեկ անձի համար կազմում է 44 584.6 (քառասունչոս հազար հինգ հարյուր ութսունչորս ՀՀ դրամ, վեց լումա) առավելագույնը 1300 աշխատակցի համար պայմանագրի գինը կկազմի 57 960 000 (իննսուն միլիոն ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկված պայմանագրի նախագծի մեկ այլ փոփոխված տարբերակում 4-րդ կետի 4.1 ենթակետը ձևակերպվել էր հետևյալ կերպ. «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 57 960 000 (իննսուն միլիոն ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, մեկ անձի համար կազմում է 44 584.6 (քառասունչոս հազար հինգ հարյուր ութսունչորս ՀՀ դրամ, վեց լումա):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:»:

Այսպիսով՝ «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ կետի 5.3 ենթակետով սահմանվել է, ***որ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով*** և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով հաստատված պայմանագրի նախագծի 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է _____ (տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:***

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ ***եթե հրավերում և պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:***

Այսպիսով՝ «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով ի սկզբանե նախատեսված է եղել, որ պայմանագրի գինը կայուն է, իսկ գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով արտահայտված: «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից հայտի թիվ 4 հավելվածով հրավերով հաստատված գնային առաջարկի օրինակելի ձևին համապատասխան ներկայացվել է մեկ թվով արտահայտված 57 960 000 ՀՀ դրամի գնային առաջարկ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Տվյալ դեպքում Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած, իսկ այնուհետև նաև Օրենքի նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Տվյալ դեպքում իրավաչափ եմ համարում Ընկերության պնդումն այն մասին, որ Պատվիրատուի կողմից անթույլատրելի են սույն բողոքի մեջ նշված պայմանագրի գնի փոփոխությունների կատարումը, քանի որ Ընկերությունն իրավունք ունի ակնկալելու, որ պայմանագիրը կնքվի իր կողմից առաջարկված և պատվիրատուի կողմից բավարար գնահատված և ընդունված գնով: Հետևաբար գտնում եմ, որ Պավիրատուի կողմից պայմանագրի նախագծի մեջ կատարված փոփոխություններն իրավաչափ չեն և հակասում են հրավերի պահանջներին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 26.06.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին վերանայել «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնման պայմանագրի

համապատասխանեցնել «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ